Այս մի երեւոյթ էր խորին ուշադրութեան արժանի Հայ պատմութեան մէջ. եկեղեցու ուրիշ բարեկարգութեան հետ արուեստասէր կաթուղիկոսի եւ գիտնական վարդապետի հոգածութեան առարկան է եկեղեցական գիտութիւնն ու արուեստը եւ այդ ոչ միայն Կիլիկիայում, այլ եւ բովանդակ Հայաստանում, յանձնարարուած բոլոր եպիսկոպոսներին:

* * *

ների, դպրոցները: Ոչ միայն կաթուղիկոսը, այլ եւ Հեթում Ա., եւ նորա եղբայրները՝ Սմբատ Գունդստապլ, եւ մանաւանդ Ցովհաննէս արքայեղբայր, Վասակ Ճանճոյ տէր, Լեւոն Գ. եւ Թագուհին Կեռան, Հեթում Բ..., հանդիսանում են արուեստի հովանաւորներ եւ մեկենասներ: Նրանց օրով մեր գեղագրական եւ մանրանկարչական արուեստներն իրենց ոսկեդարն են ապրում:

Բայց Կոստանդին Կաթուղիկոսի շըր-

Պատկ. 8.— Երուս. No. 2660/105, 1262 Թուի

Ինչ որ տեսականապէս որոշուած էր կանոններով, իրագործուած ենք տեսնում նոյնը կաթուղիկոսի ձեռքով: ԺԳ. դարի երկրորդ քառորդից յետոյ, գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստները իրենց բարձրագոյն զարգացման շրջանն են ապրում: Ոչ միայն Հռոմկլայի դպրոցը, կաթուղիկոսի անմիջական հովանաւորութեան տակ, տալիս է իւր գեղեցկագոյն գործերը, այլ եւ Դրազարկի, նորա հետ կապուած Գոնների եւ Ակ-

ջանի մասին խօսելուց առաջ մի քանի խօսքով զաղափար տանք նախընթաց ժամանակի եւ այն պայմանների մասին, որոնք զարկ տուին ձեռագրական արուեստի հրաշալի ծաղկման, որի մի հատուածի մասին պիտի խօսենք այստեղ: Բիւզանդական անխորհուրդ քաղաքականութեան հետեւանքով եւ Սելջուկեան հարուածների տակ Հայ իշխանութիւնների անկումը բուն երկրում, արտագաղթի զօրաւոր մի շարժում յառաջ բե-